# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

23-ը դեկտեմբերի 2022թ.
Ժամը $10^{40}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,

ՀՀ ԶՈւ ԹՎ ՊԾ սննդի անվտանգության պլանավորման և վերահսկման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Արզումանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մինասյան,

Բացակայում էր ՀՀ ԶՈւ ԹՎ ՊԾ սննդի անվտանգության պլանավորման և վերահսկման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Կ. Մովսիսյանը:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի ավագ մասնագետ, Ն. Թադևոսյան:

## *« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.*

(Ն. Թադևոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ն. Թադևոսյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ԷԼՁԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ |
| 2 | «Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի» Ա/Ձ |
| 3 | «Գագիկ Սիմոնյան Արթուրի» Ա/Ձ |
| 4 | «Ս.Ա.Վ ԳՐՈւՊ» ՍՊԸ |
| 5 | «Մեդիսար» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

---

(Ն. Թադևոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ՝

- «Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի» Ա/Ձ-ի, որի կողմից ներկայացված հայտի Հավելված 2-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված ծածկագրին:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

- «Գագիկ Սիմոնյան Արթուրի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: Ուստի անհրաժեշտ է Հավելված N 1-ը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան:

- «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: Ուստի անհրաժեշտ է Հավելված N 1-ը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան:

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի և Հավելված N 1.3-ի էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չէ, անհրաժեշտ է վերոնշյալ հավելվածները հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացվել է «Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից», այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրով սահմանվել է «Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս»: Ուստի անհրաժեշտ է հստակ նշել պիտանելիության ժամկետը մատակարարման պահին: Ինչպես նաև 3-րդ չափաբաժնի մասով

ներկայացվել է «Զանգվածային մասը 65%-ից» այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրով սահմանվել է «Զանգվածային մասը 65%-ից ոչ պակաս» անհրաժեշտ է հստակ նշել զանգվածային մասը, քանի որ Ձեր կողմից նշվածը հստակ չէ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը 23.12.2022թ. գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ն. Թադևոսյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակից.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Ընտրված կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | անվանումները | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով |
| 1 | ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիկսանալ նատրիումի հիդրօքսիդ/ | հատ | 1 | 5 000 | | | | | | |
| 2 | ացետոն/ դիմեթիլ կետոն/Ացետոն/ | լիտր | 5 | 6 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 5 000 | 6 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 5 000 | 6 000 |
| 3 | ազոտական թթու/Ազոտական թթու/ | կգ | 2 | 2 100 | «Մեդիսար» ՍՊԸ | 1 750 | 2 100 | «Մեդիսար» ՍՊԸ | 1 750 | 2 100 |
| 4 | բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Լանցետ/ | հատ | 3 | 7 500 | «Մեդիսար» ՍՊԸ | 6 250 | 7 500 | «Մեդիսար» ՍՊԸ | 6 250 | 7 500 |
| 5 | բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Լաբորատոր թիակ/ | հատ | 2 | 9 960 | «Մեդիսար» ՍՊԸ | 8 291.67 | 9 950 | «Մեդիսար» ՍՊԸ | 8 291.67 | 9 950 |
| 6 | բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Լաբորատոր թիակ/ | հատ | 2 | 9 960 | «Մեդիսար» ՍՊԸ | 8 291.67 | 9 950 | «Մեդիսար» ՍՊԸ | 8 291.67 | 9 950 |
| 7 | բժշկական ձեռնոցներ/Լաբորատոր ձեռնոց/ | հատ | 10 | 42 000 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 |
| | | | | | | | | «ԷՍՁԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ | 10 650 | 12 780 |
| | | | | | | | | «Գագիկ Սիմոնյան Արթուրի» Ա/Ձ | 34 000 | |
| | | | | | | | | «Մեդիսար» ՍՊԸ | 33 333.33 | 40 000 |
| 8 | բժշկական ձեռնոցներ/Լաբորատոր ձեռնոց/ | հատ | 10 | 42 000 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 |
| | | | | | | | | «ԷՍՁԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ | 10 650 | 12 780 |
| | | | | | | | | «Գագիկ Սիմոնյան Արթուրի» Ա/Ձ | 34 000 | |
| | | | | | | | | «Մեդիսար» ՍՊԸ | 33 333.33 | 40 000 |
| 9 | բժշկական ձեռնոցներ/Լաբորատոր ձեռնոց/ | հատ | 10 | 42 000 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 | «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 10 400 | 12 480 |
| | | | | | | | | «ԷՍՁԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ | 10 650 | 12 780 |
| | | | | | | | | «Գագիկ Սիմոնյան Արթուրի» Ա/Ձ | 34 000 | |
| | | | | | | | | «Մեդիսար» ՍՊԸ | 33 333.33 | 40 000 |
| 10 | գազքրոմատոգրաֆիայ ին համար նախատեսված ներարկիչ/Գազային քրոմատոգրաֆի ներարկիչ/ | հատ | 2 | 132 000 | | | | | | |
| 11 | թթվածիմացկուն կոստյում/Մասնագիտա կան հագուստ/ | լրակ ազմ | 7 | 1 609 440 | | | | | | |
| 12 | լաբորատոր ապակյա արտադրանք/Բուտիրոմ ետր/ | հատ | 30 | 114 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 95 000 | 114 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 95 000 | 114 000 |
| 13 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ազո տ օրգանական և սպիտակուցների որոշման հետազոտությունների համար ռեագենտների և ստանդարտների լրակազմ/ | լրակ ազմ | 1 | 396 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 330 000 | 396 000 | «Մեդիսար» ՍՊԸ | 330 000 | 396 000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգը 1-ին, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին**

---

(Ն.Թադևոսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը 30.12.2022թ.-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1. «Մեդիսար» ՍՊԸ-ին 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով,
2. «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվել է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

---

(Ն.Թադևոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Ա. Արզումանյան |
| Գնահատող | Ա. Մինասյան |
| Գնումները համակարգող՝ | Ն. Թադևոսյան |